ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ-ն ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Ղեկավարի գրասենյակային սեղան՝ կողադիրով և դիմադիր կցորդով Նշանակությունը և կառուցվածքը՝ ղեկավարի գրասենյակային աշխատանքների, փաստաթղթերի և գրասենյակային պարագաների պահպանման, ինչպես նաև այցելուների ընդունելության համար նախատեսված սեղանային համալիր՝ բաղկացած գլխավոր աշխատասեղանից, կողադիր պահարանից (տումբա) և այցելուների համար նախատեսված դիմադիր սեղանից (կոնֆերանս-կցորդ)։ Գլխավոր աշխատասեղանի չափերը՝ • Երկարությունը՝ 1600–1800 մմ։ • Լայնությունը (խորությունը)՝ 750–850 մմ։ • Բարձրությունը՝ 750–780 մմ։ Դիմադիր սեղանի (կոնֆերանս-կցորդի) չափերը՝ • Երկարությունը՝ 600–1000 մմ։ • Լայնությունը՝ 500–600 մմ։ • Բարձրությունը՝ 720–750 մմ։ Կողադիր պահարանի (տումբայի) չափերը՝ • Երկարությունը՝ 800–1000 մմ։ • Լայնությունը (խորությունը)՝ 450–650 մմ։ • Բարձրությունը՝ 450–650 մմ։ Կողադիր պահարանի կառուցվածքը՝ առնվազն 3 դարակով, գրասենյակային փաստաթղթերի և պարագաների պահպանման համար նախատեսված։ Դարակները՝ մետաղական ուղղորդիչներով (սահնակներով), սահուն բացման և փակման հնարավորությամբ, առանց խցանումների և շեղումների։ Առնվազն մեկ դարակը՝ բանալիով փակվող փականով։ Հիմնական նյութը՝ երկկողմանի մելամինապատ լամինացված փայտատաշեղային սալ (ԼՓՏՍ) կամ միջին խտության փայտաթելային սալ (ՄԴՖ/MDF)՝ գրասենյակային կահույքի արտադրության համար նախատեսված։ Նյութի հաստությունը՝ • Գլխավոր աշխատասեղանի և դիմադիր սեղանի աշխատանքային մակերեսները՝ 25–32 մմ։ • Կողային պատերը, ուղղահայաց հենարանները և ներքին կառուցվածքային տարրերը՝ 18–22 մմ։ Աշխատանքային մակերեսները՝ հարթ, քերծվածքների, շփման և առօրյա մեխանիկական ազդեցությունների նկատմամբ դիմացկուն,

	հեշտ մաքրվող, խոնավ մաքրման նկատմամբ կայուն: Եզրապատումը՝ բոլոր տեսանելի եզրերը և անկյունները՝ հարվածների, խոնավության և առօրյա մեխանիկական ազդեցությունների նկատմամբ դիմացկուն պոլիվինիլքլորիդե (ՊՎՔ/PVC) եզրաժապավենով պատված, հաստությունը՝ առնվազն 2 մմ: Եզրապատումը՝ ամբողջական, առանց սուր եզրերի, բացվածքների և շերտազատումների: Կցամասերը և ամրացումները՝ մետաղական միացնող և ամրացնող տարրերով, այդ թվում՝ թաքնված ամրացման մեխանիզմներով (էքսցենտրիկ կապեր կամ համարժեք լուծումներ): Կառուցվածքային միացումները՝ ամուր, հուսալի, առանց արտաքին տեսքը խաթարող բաց ամրացումների: Հենակները՝ բարձրությունը կարգավորելու հնարավորությամբ՝ առնվազն 10 մմ կարգավորման միջակայքով, հատակի անհարթությունների փոխհատուցման և սեղանի կայուն տեղադրման համար: Հատակին հպվող հատվածները՝ հատակի մակերեսը քերծվածքներից և վնասվածքներից պաշտպանող ներդիրներով: Մալուխների անցկացման հատվածները՝ գլխավոր աշխատասեղանի աշխատամակերեսին համակարգչային և այլ սարքավորումների մալուխների անցկացման համար նախատեսված առնվազն մեկ անցք՝ պլաստիկե կամ մետաղական դեկորատիվ կափարիչով: Կայունությունը՝ ամուր կառուցվածքով, առանց ճոճման, շահագործման ընթացքում առաջացող բեռնվածքների նկատմամբ դիմացկուն: Գլխավոր աշխատասեղանի, կողադիր պահարանի և դիմադիր կցորդի կառուցվածքային համատեղելիությամբ: Արտաքին տեսքը՝ բոլոր բաղադրիչները՝ միասնական ոճով և համահունչ գունային լուծումներով: Մակերեսները՝ հարթ, առանց ճաքերի, քերծվածքների, շերտազատումների, գունային անհամապատասխանությունների և այլ տեսանելի վնասվածքների: Գույնը՝ դարչնագույն կամ մոկկո կամ բեժ (երանգները և նախշերը համաձայնեցնելով Պատվիրատուի հետ) Ընդհանուր պահանջները՝ նոր, չօգտագործված, հավաքման և շահագործման համար անհրաժեշտ բոլոր կցամասերով, ամրակներով և պարագաներով: Մատակարարման պայմանները՝ ապրանքի մատակարարումը, բեռնաթափումը, հավաքումը (եթե ապրանքը ունի հավաքման կարիք) և տեղադրումը համապատասխան սենյակում կամ պահեստում, ինչպես նաև կարգաբերումները իրականացվում է Վաճառողի ուժերով և իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 365օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Армен Рафаелян Румелович ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	